

«Գրեյս Ֆորում» ՍՊԸ  
ՀՎՀՀ (ՈՒՄՄ) 02840659  
0015 ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն  
Պարոնյան փ., 19/3 շ.  
Թեժ գիծ, ամրագրման բաժին՝  
8 (800) 302 19 90  
E-mail: zakaz@grace-forum.ru

Հաստատում եմ՝  
Տնօրեն

Ջանվելյան Տ. Ս.  
«01» մայիսի 2021 թ.  
Կ.Տ.



## «Գրեյս Ֆորում» հյուրանոցում սենյակներ ամրագրելու կանոններ

### Ընդհանուր դրույթներ

Այս փաստաթուղթը հանդիսանում է «ԳՐԵՅՍ ՖՈՐՈՒՄ» ՍՊԸ-ն, այսուհետ՝ ԿԱՏԱՐՈՂ, պաշտոնական առաջարկը (հրապարակային օֆերտան) և պարունակում է «Գրեյս Ֆորում» հյուրանոցում համարների ամրագրելու, դրանց համար վճարելու և դրանք սպառողներին տրամադրելու բոլոր անհրաժեշտ պայմանները:

Վերոնշյալի կապակցությամբ խորհուրդ ենք տալիս ուշադիր կարդալ այս հրապարակային օֆերտայի տեքստը, և եթե որևէ կետի հետ համաձայն չեք, ԿԱՏԱՐՈՂՆ առաջարկում է Ձեզ հրաժարվել ծառայությունները ձեռք բերելուց:

### Սույն Կանոններում օգտագործվող հիմնական հասկացությունները.

«Ամրագրում» - հաճախորդի (սպառողի) կողմից հյուրանոցում կամ այլ կացարանում տեղերի և (կամ) համարների նախնական պատվիրում:

«Հաճախորդ» - ֆիզիկական (իրավաբանական) անձ, որը պատվիրում կամ ձեռք է բերում հյուրանոցային ծառայություններ և (կամ) ծառայություններ՝ կացարանում ֆիզիկական անձանց ժամանակավոր տեղավորման (բնակվելու) համար ի շահ սպառողի:

«Կատարող» - իրավաբանական անձ (օտարերկրյա իրավաբանական անձի մասնաճյուղ, որը ներառված է հավատարմագրված մասնաճյուղերի, օտարերկրյա իրավաբանական անձանց ներկայացուցչությունների պետական գրանցամատյանում,) կամ անհատ ձեռնարկատեր, որը սպառողին մատուցում է հյուրանոցային ծառայություններ և (կամ) կացարանում ֆիզիկական անձանց ժամանակավոր տեղավորման (բնակվելու) ծառայություններ:

«Սպառող» («Հյուր») - ֆիզիկական անձ, որը պատվիրում կամ ձեռք է բերում և (կամ)

օգտագործում է հյուրանոցային ծառայություններ և (կամ) կացարանում ֆիզիկական անձանց ժամանակավոր տեղավորման (բնակվելու) ծառայություններ անձնական և այլ կարիքների համար, որոնք կապված չեն ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու հետ:

Մենյակի ամրագրումն իրականացվում է հայտ ուղարկելով «Գրեյս Փորում» հյուրանոց`

ա) կայքից,

բ) էլեկտրոնային փոստով,

գ) հեռախոսով. ամրագրման բաժին, անվճար թեժ գիծ 8 (800) 302 19 90, +3 746 050 50 44

դ) անմիջապես «Գրեյս Փորում» հյուրանոցում` ադմինիստրատորի մոտ` ընդունարանում,

ե) հայտեր պորտալներից.

զ) հայտեր գործակալներից:

### **1. Ամրագրման հաստատման ժամկետը**

1.1. Ամրագրման բաժինը, ամրագրման հայտը ստանալուց հետո 24 ժամից ոչ ուշ հաստատում է Հյուրին ամրագրումը կամ մերժում է հայտի բավարարումը:

1.2. Ամրագրման հայտը հաստատելու դեպքում, Ամրագրման բաժինը Հյուրին ուղարկում է հաշիվ` բնակության համար կանխավճար վճարելու համար: Բնակությունը ամրագրած հյուրերը պետք է կանխավճար կատարեն իրենց բնակվելու առաջին օրվա համար:

1.3. Հաշիվը ներկայացնելու և այն Հյուրին ուղարկելու պահից հաշվում նշված համարը համարվում է նախապես ամրագրված:

1.4. Հաշիվը համարվում է վավեր հինգ օրվա ընթացքում, եթե ամրագրման ամսաթվի և Հյուրի ժամանման ամսաթվի միջև եղած ժամանակահատվածը հինգ օրից ավելի է:

1.5. Եթե ամրագրման ամսաթվի և Հյուրի ժամանման ամսաթվի միջև եղած ժամանակահատվածը հինգ օրից պակաս է, Ինտերնետ Էկվայրինգ ծառայության միջոցով ներկայացվում է առցանց վճարման հղում, որն ուժի մեջ է հաշիվը ներկայացնելու պահից 24 ժամվա ընթացքում:

1.6. Եթե ամրագրման ամսաթվի և Հյուրի ժամանման ամսաթվի միջև եղած ժամանակահատվածը 24 ժամից պակաս է, Ինտերնետ Էկվայրինգ ծառայության միջոցով ներկայացվում է առցանց վճարման հղում, որն ուժի մեջ է հաշիվը ներկայացնելու պահից 3 ժամվա ընթացքում:

1.7. Նշված ժամանակահատվածում հաշվեհամարին, հյուրանոցի դրամարկղը կամ Ինտերնետ Էկվայրինգ հղումով դրամական միջոցներ չստանալու դեպքում հյուրանոցն իրավունք ունի չեղյալ հայտարարել նախնական ամրագրումը:

1.8. Սահմանված վճարման ժամկետները Հյուրի կողմից խախտելու դեպքում համարի ամրագրումը չեղարկվում է:

1.9. Ամրագրումը չեղարկելու պարտադիր պայման է` ելքային զանգ կատարելով Հյուրին ծանուցելը պատասխանատու մենեջերի կողմից` Հյուրի կողմից վճարումն իրականացնելու նպատակով:

1.10. Համարը համարվում է երաշխիքով ամրագրված հաշվեհամարին կամ հյուրանոցի դրամարկղը կանխավճարը ստանալու պահին:

1.11. Հյուրանոցը ամրագրման հաստատման ձևը ուղարկում է Հյուրին էլեկտրոնային հասցեով: Հետագայում այդ գումարը ներառվում է սենյակի համար վճարման արժեքի մեջ:

## **2. Հյուրերի ժամանման և մեկնման կանոնները, հաշվարկային ժամը**

2.1. Հյուրերի ժամանումը տեղի է ունենում ժամը 15:00-ից: Հաշվարկային ժամը՝ մեկնելու օրվա ժամը 12:00 է:

2.2. Վաղ ժամանում/ուշ մեկնում ծառայությունը մատուցվում է հյուրի ժամանելուն կամ մեկնելուն պես: Տվյալ ծառայությունը նախապես չի ամրագրվում.

- Վաղ ժամանումը՝ հաշվարկային ժամից մինչև ժամը 6 շուտ / ուշ մեկնումը՝ հաշվարկային ժամից մինչև 6 ժամ հետո – ժամավճար:

- Վաղ ժամանում/ուշ մեկնումը՝ 6 ժամից ավելի, բայց 12 ժամից պակաս = 1 օրվա մնալու արժեքի 1/2 - ը:

- Վաղ ժամանում/ուշ մեկնումը՝ 12 ժամից ավելի հավասար է մնալու մեկ օրվա արժեքին:

2.3. Ժամանման պահին Հյուրը Ադմինիստրատորին է տրամադրում անձնագիրը (պարտադիր է յուրաքանչյուր հյուրի համար), ծննդյան վկայականը (երեխաների համար) և ամրագրման հաստատման ձևը (պարտադիր չէ):

2.4. Համարի ամրագրումը վերապահված է Հյուրին պլանավորված ժամանման (երաշխավորված ամրագրման) օրվանից մինչև հաջորդ օրվա առավոտյան ժամը 07.00-ը:

2.5. Եթե Հյուրը չի ժամանում պլանավորված ժամանման օրվանից մինչև հաջորդ օրվա առավոտյան ժամը 07.00-ը, ամրագրումը չեղարկվում է:

2.6. Եթե Հյուրը ժամանում է պլանավորված ժամանման օրվան հաջորդող օրվա առավոտյան ժամը 07.00-ից հետո, նրա տեղավորումը Հյուրանոցում/Հյուրանոցային համալիրում կատարվում է հերթի կարգով և ազատ համարների առկայության դեպքում:

2.7. Եթե Հյուրը չի ժամանում մինչև պլանավորված ժամանման օրվան հաջորդող օրվա առավոտյան ժամը 07.00-ը, Հյուրից գանձվում է տույժ՝ կատարված կանխավճարից մեկ օրվա վճարի չափով.

2.8. Եթե ամրագրումը վճարված է ավելի քան 1 օրվա համար, և եթե Հյուրը չի ժամանում մինչև պլանավորված ժամանման օրվան հաջորդող օրվա առավոտյան ժամը 07.00-ը, նման ամրագրումը պահպանվում է մինչև պլանավորված ժամանման օրվան հաջորդող օրվա ցերեկվա ժամը 12:00-ը՝ իրավիճակը պարզելու համար: Եթե Հյուրը չի ժամանել և/կամ կապվել է ժամը 12:00-ից հետո, Հյուրանոցն իրավունք ունի չեղարկել ամրագրումը:

## **3. Ամրագրում գեղչերով և ակցիաներով**

**3.1.** Չեղչի ժամանակահատվածում կամ ակցիայով ամրագրում կատարելու դեպքում հիշեք, որ գեղչերը իրար չեն գումարվում և գործում են միայն հիմնական տեղերի համար: **ՉԵՂՉԵՐԸ ԵՎ ԱԿՑԻԱՆԵՐԸ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵՐԻՆ ՉԵՆ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ:**

3.2. Հյուրի՝ «Մշտական հյուր» գեղչով ամրագրում կատարելու դեպքում անհրաժեշտ է անպայման ստուգել հյուրի պատմությունը՝ այցելությունների քանակը: Եթե հյուրը հանգստացել էր այլ ազգանվան տակ, նա պետք է տա այն հյուրի ազգանունը, որով կատարվել էր նախորդ ամրագրումը: Այս դեպքում Մշտական հյուրի գեղչը կգործի: Հաշվի չեն առնվում չեղարկված ամրագրումները:

## **4. Հյուրանոցային ծառայությունների գները**

4.1. Հյուրին մատուցվող ծառայությունների արժեքը նշվում է ամրագրումը հաստատող հաղորդագրության մեջ: Կողմերի միջև վերջնական հաշվարկներ կատարելիս հաշվի է առնվում ամրագրումը հաստատող հաղորդագրության մեջ նշված արժեքը:

4.2. Երեխաներն ընդունվում են ցանկացած տարիքից:

4.3. Մինչև 4 տարեկան երեխաները հյուրանոցում բնակվում են անվճար. 4 տարեկանից բարձր երեխաների համար պարտադիր պետք է ձևակերպել լրացուցիչ տեղ:

4.4. Եթե համարում 4 տարեկանից ցածր մեկից ավելի երեխա կա, ապա պարտադիր

ձևակերպվում է լրացուցիչ տեղ ստանդարտ տարիֆով:

4.5. Եթե սենյակում 4 տարեկանից բարձր մեկից ավելի երեխա կա, ապա պարտադիր ձևակերպվում է լրացուցիչ տեղ յուրաքանչյուր երեխայի համար:

## **5. Վճարման կարգը հյուրանոցում**

5.1. Հյուրի հայեցողությամբ ծառայությունները կարող են վճարվել հետևյալ եղանակներից որևէ մեկով՝

- Անկանխիկ կարգով՝ դրամը Հյուրանոցի բանկային հաշվին փոխանցելու միջոցով.
- Հյուրանոցի դրամարկում կանխիկ վճարում կատարելու միջոցով.
- Բանկային քարտով.
- Առցանց վճարում՝ Ինտերնետ Էկվայրինգ հղումի միջոցով (հղումն ուղարկվում է ամրագրման բաժնի մենեջերի կողմից):

5.2. Բանկային քարտով վճարելիս օգտագործվում են հետևյալ վճարային համակարգերը՝

- MIP,
- VISA International,
- Mastercard Worldwide.

5.3. Հյուրանոցի ծառայությունների դիմաց վճարելու Հյուրի պարտավորությունը համարվում է կատարված այն պահին, երբ կանխավճարը/համապատասխան միջոցները մուտքագրվում են Հյուրանոցի հաշվեհամարին կամ դրամարկղը:

## **6. Բնակության ժամկետները փոխելու պայմանները**

6.1. Հյուրը կարող է առանց տույժերի կատարել բնակվելու ամսաթվերի (ժամանման ամսաթիվը, մեկնելու ամսաթիվը, բնակվելու տևողության փոփոխություն) ցանկացած փոփոխություն բարձր սեզոնի ընթացքում՝ 20.04-ից մինչև 15.10-ը, ժամանման օրվանից ոչ ուշ, քան 14 օր առաջ. ցածր սեզոնին՝ 16.10-ից մինչև 19.04-ը, ժամանման օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ:

6.2. Եթե Հյուրը որոշակի ժամկետով Հյուրանոցում համար է ամրագրել և ստիպված է եղել հեռանալ այդ ժամկետից շուտ, Հյուրը պարտավոր է Հյուրանոցին տեղեկացնել բնակվելու ժամկետների փոփոխության մասին մեկնելուց 48 ժամ առաջ: Հակառակ դեպքում, Հյուրից գանձվում է տույժ բնակման մեկ օրվա վճարի չափով:

6.3. Եթե Հյուրը որոշակի ժամկետով Հյուրանոցում համար է ամրագրել և ժամանման պահին կրճատում է բնակվելու ժամկետը մինչև 1 օրվա, Հյուրանոցն իրավունք ունի հրաժարվել տվյալ հյուրին ընդունելուց:

6.4. Բնակվելու ժամկետը փոխելու անհրաժեշտության դեպքում.

ա) Բնակվելու ամսաթվերի տեղափոխումը և փոփոխումը ժամանման օրվանից 3 օրից պակաս ժամանակահատվածով չի ենթադրում տույժերի կիրառում Հյուրի նկատմամբ:

բ) Բնակվելու ամսաթվերի տեղափոխումը և փոփոխումը ժամանման օրվանից 3 օրից ավել ժամանակահատվածով համարվում է ամրագրման չեղարկում:

6.5. Հյուրի համար ամրագրումը չեղարկվում է և ձևակերպվում է նոր ամրագրում նշված ամսաթվերով: Այս դեպքում կատարված կանխավճարից պահվում է մեկ օրվա բնակվելու վճարի չափով տույժ և չի փոխանցվում հետագա ամրագրմանը: Նոր ամսաթվերով ամրագրում կատարելիս Հյուրից գանձվում է կանխավճար:

## **7. Ամրագրման չեղարկում**

7.1. Առանց տույժերի կիրառման Հյուրանոցի կողմից հաստատված ամրագրման չեղակման մասին Հյուրը պետք է հայտնի բանավոր՝ հեռախոսազանգի միջոցով, կամ գրավոր՝ Հյուրանոցի էլեկտրոնային փոստին գրավոր ծանուցում ուղարկելով, բարձր սեզոնին՝ 20.04-ից մինչև 15.10-ը,

Ժամանման օրվանից ոչ ուշ, քան 14 օր առաջ. ցածր սեզոնին՝ 16.10-ից մինչև 19.04-ը, ժամանման օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ: Նշված պայմանը խախտելու դեպքում Հյուրից գանձվում է տույժ՝ ընտրված կատեգորիայի համարում բնակվելու համար կատարված նախավճարից մեկ օրվա արժեքի չափով:

## **8. Կանխավճարը վերադարձնելու կարգը**

8.1. Եթե Հյուրը հրաժարվում է համար ամրագրելուց և չեղարկման մասին համապատասխան գրավոր ծանուցում է ուղարկում Հյուրանոցի էլեկտրոնային հասցեին կամ բանավոր՝ Հյուրանոց կատարած հեռախոսագանգի միջոցով է հայտնում այդ մասին սույն ամրագրման կանոնների 8.1 կետում նշված ժամկետից ոչ ուշ, Հյուրին կանխավճարը վերադարձվում է ամբողջությամբ՝ առանց տույժ կիրառելու, բացառությամբ փոխանցման միջնորդավճարը:

8.2. Իր հերթին, Հյուրանոցը Հյուրի էլեկտրոնային փոստին է ուղարկում Կանխավճարը (դրամը) վերադարձնելու բլանկը:

8.3. Կանխավճարը վերադարձնելու համար Հյուրը լրացնում է բլանկը (կենդանի ստորագրություն, սկանավորում), բանկային հաշվի ամբողջական տվյալները և այն ուղարկում Հյուրանոցի էլեկտրոնային հասցեով: Վերադարձը կատարվում է 10 աշխատանքային օրվա ընթացքում:

8.4. Մնացած բոլոր դեպքերում կատարված կանխավճարից չի վերադարձվում մեկ օրվա բնակվելու արժեքի չափով կանխավճարը:

## **9. Անհաղթահարելի ուժի ազդեցության իրավիճակներ և այլ պայմաններ**

9.1. Բացառիկ դեպքերում, Հյուրանոցն իրեն իրավունք է վերապահում փոխարինել նախապես ամրագրված համարը հավասար կամ ավելի բարձր դասի համարով՝ առանց փոխելու բնակության արժեքը կամ կանխավճարը ամբողջությամբ վերադարձնել Հաճախորդին: Ընդ որում, Հյուրանոցը անմիջապես տեղեկացնում է Հաճախորդին կատարված փոխարինման կամ կանխավճարը վերադարձնելու մասին:

9.2. Հաճախորդը կնքում է օֆերտայի պայմանագիրը կամավոր, ընդ որում Հաճախորդը՝ ա) լիովին ծանոթացել է օֆերտայի պայմաններին, բ) լիովին հասկանում է օֆերտայի առարկան և օֆերտայի պայմանագրի պայմանները, գ) լիովին գիտակցում է իր գործողությունների նշանակությունն ու հետևանքները՝ կապված Օֆերտայի պայմանագրի կնքման և կատարման հետ:

9.3. Հաճախորդն ունի օֆերտայի պայմանագրի կնքման և կատարման համար անհրաժեշտ բոլոր իրավունքներն ու լիազորությունները:

9.4. Եթե օֆերտայի պայմաններից որևէ մեկը անվավեր կամ անօրինական է ճանաչվում, այն հանվում է օֆերտայից և փոխարինվում է նոր դրույթով, որն առավելագույնս համապատասխանում է օֆերտայում պարունակվող սկզբնական մտադրություններին, մինչդեռ օֆերտայի մնացած դրույթները չեն փոխվում և մնում են ուժի մեջ:

9.5. Հաշիվը վճարելիս Հաճախորդն ավտոմատ կերպով հաստատում է իր համաձայնությունը Հյուրանոցի ամրագրման կանոնների հետ:

